ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

♦ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ

Բորիս Դեմիրխանյան

♦ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ

♦ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Էստոնիայի Հանրապետություն, քաղաք Տալլին, 2017թ. հոկտեմբերի 3-ից 5-ը:

♦ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԵՐԸ

Եվրոպական հանձնաժողով

♦ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն «էլ-Համագործակցություն» կոնֆերանսին և Արևելյան գորընկերության երկրորդ նախարարական համաժողովին:

♦ԷԼ-ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ

2017թ. հոկտեմբերի 4-ին Էստոնիայի մայրաքաղաք Տալլինում կայացած «էլ-Համագործակցություն» կոնֆերանսին մասնակցել են Եվրոպական հանձնաժողովի ներկայացուցիչներ, վեց ԵՄ Արևելյան գործընկերության երկրների տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտը համակարգող նախարարների տեղակալներ և բարձրաստիճան պաշտոնյաներ, ինչպես նաև փորձագետներ և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ:

Կոնֆորանսին բացման խոսքով հանդես է եկել Էստոնիայի վարչապետ Յուրի Ռատասը, արտաքին գործերի նախարար Սվեն Միկսերը և էլ-Կառավարման ակադեմիայի զարգացման և ռազմավարության գծով տնօրեն Հաննես Աստոկը:

Համաժողովի շրջանակում քննարկվել են կիբերտարածքի անվտանգությունը, ապահովությունը և էլ-ժողովրդավարությունը: Նախքան քննարկումները իրականացվել են ԵՄ արևելյան գործընկերության երկրներում համապատասխան ոլորտների ուսումնասիրություններ և մշակվել դրանց բարելավման առաջարկներ:

Մասնավորապես, նշվեց, որ Հայաստանի Հանրապետությունում կիբեռանվտանգության ոլորտը ավելի համակարգված մոտեցման կարիք ունի: Հատկապես ուշադրություն է պետք դարձնել կիբեռանվտանգության ռազմավարության մշակման, համապատասխան կառույցների ձևավորման, ինչպես նաև այդ ոլորտում կրթության վրա:

էլ-Ժողովրդավարության բնագավառում՝ Հայաստանի նվաճումների շարքում նշվեցին ինտերակտիվ բյուջեն և «Բաց կառավարության գործընկերություն» գործողությունների ծրագիրը: Միջոցառման այս հատվածում ելույթ ունեցավ նաև ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Բորիս Դեմիրխանյանը, ով նշեց նաև մի ժարք այլ ձեռքբերումներ, ներառյալ երնթակառուցվածքների զարգացումը, էլ-փաստաթուղթ կայքի գործարկումը և այլն:

♦ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԹՎԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԵՐԿՐՈՐԴ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Հոկտեմբերի 5-ին տեղի ունեցավ Արեվելյան գորընկերության երկրների թվային տնտեսության հարցերով երկրորդ նախարարական համաժողովը: Համաժողովին մասնակցել էն Եվրոպական հանձնաժողովի ներկայացուցիչներ, վեց ԵՄ Արևելյան գործընկերության երկրների, ԵՄ անդամ-պետությունների ՏՀՏ ոլորտը համակարգող բարձրաստիճան պաշտոնյաներ, ինչպես նաև Եվրոպական ներդրումային բանկի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի և Համաշխարհային բանկի ներկայացուցիչներ: Ուկրաինան և Բելառուսը ներկա էին նաև Ուկրաինայի և Բելառուսի փոխվարչապետները:

Համաժողովի բացմանը ելույթ ունեցան Էստոնիայի ձեռներեցության և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Ուրվե Պալոն և Եվրամիության միասնական թվային շուկաների գծով փոխնախագահ Անդրուս Անսիպը: Մասնակիցները հանդես եկան կարճ ելույթներով, նշելով թվային շուկաների ներդաշնակեցման կարևորությունը տնտեսական զարգացման համար, ինչպես նաև անդրադարձ կատարվեց այդ ոլորտում համագործակցության կարևորությանը և երկրների նախաձեռնություններին: Եվրոպական ներդրումային բանկի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի և Համաշխարհային բանկի ներկայացուցիչները ևս նշեցին իրենց կառույցների կողմից իրականացվող աշխատանքները և այդ ուղղությամբ իրականացվող նախաձեռնությունները ֆինանսավորելու պատրաստակամություն հայտնեցին:

♦ **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ**

Միջոցառման շրջանակում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների փոխնախարար Բորիս Դեմիրխանյանը և «Թվային Հայաստան» հիմնադրամի գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Էդուարդ Ներսիսյանը հանդիպել են Եվրոպական ներդրումային բանկի արևելյան հարևան երկրների պետական հատվածի բաժնի պետ Լիոնել Ռապայյին: Հանդիպման ընթացքում քննարկվեցին համագործակցության հնարավորությունները և նախաձեռնությունները: Մասնավորապես, Եվրոպական ներդրումային բանկին առաջարկվեց դիտարկել Հայսատանում նախատեսվող տվյալների մշակման կենտրոնի կառուցման մասնակցությունը:

Համաժողովի շրջանակում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների փոխնախարար Բորիս Դեմիրխանյանը հանդիպեց Համաշխարհային բանկի ներկայացուցիչ Հուան Նավաս-Սաբատերին: Պարոն Նավաս-Սաբատերը Համաշխարհային բանկի կողմից հետաքրքրություն արտահայտեց Հայաստանում ծրագրեր ֆինանսավորելու վերաբերյալ, մասնավորապես լայնաշերտ ցանցի զարգացման ոլորտում:

♦ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Արևելյան գործընկերության երկրների թվային տնտեսության հարցերով երկրորդ նախարարական համաժողովի արդյունքում ընդունվել է հռչակագիր: Հռչակագրում նշվում են համագործակցության հիմնական ուղղությունները.

- Էլեկտրոնային հաղորդակցության կանոններ և ենթակառույցներ,
- Թվային տնտեսության հանդեպ վստահություն և դրա անվտանգություն,
- էլ-առևտուր, ներառյալ էլ-առևտուրը, էլ-մաքսայինը և էլ-լոգիստիկան/թվային տրանսպորտային միջանցքները,
- Թվային կարողությունները,
- ՏՀՏ նորարարություն և սկսնակ ընկերությունների էկոհամակարգեր,
- էլ-առողջապահություն:

Փաստաթուղթը նշում է նաև Եվրամիության կողմից նախատեսվող աջակցությունը նշված ուղղություններին EU4Digital առևտրային նշանի ներքո: Նշվել են նաև այս ուղղություններով իրականացվելիք նախաձեռնությունները: Փաստաթուղթը կցված է սույն հաշվետվությանը:

♦ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բորիս Դեմիրխանյան
09.10.2017թ.

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Նալբանդյան 28 Հեռ.՝ (37410) 59 00 01, էլ. Փոստ՝ minister@mtcit.am